

ՀԱՄԱՏԵՔՍ ԵՎ ՏԵՔՍ

ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ

Հիմնաբառեր՝ տեքստ, համատեքստ, բան, աշխարհընկալում, հիշողություն, ճշմարտացի

Յուրաքանչյուր տեքստ պարունակում է բովանդակային պահանջ, որի սպառմանը ձգտելու արդյունքում այն ստեղծվել է հարաբերականորեն ամբողջացած ու ձևավորած սահմաններում: Կոնկրետ տեքստի՝ հարաբերականորեն առկա սահմանները ձևավորվում են կա՛մ անհատական, կա՛մ կոլեկտիվ ճանապարհով:

Տեքստային ձև ստացած իրողություններից հիշողությունն առանձնացնում և պահպանում է միայն այն, ինչը ներդաշնակ է իր պարունակությանը, այսինքն՝ համատեքստին, որն արդեն տվյալ լեզվամտածողության սահմաններում ասված ու ընդհանուրի մտապահած տեքստն է, խոսքը: **Համատեքստը** մասնագիտական գրականությունը ներկայացնում է որպես **կոնտեքստ**¹, որպես «խոսքային շղթայի՝ իմաստով ու ձևով ավարտուն, ամբողջականություն ներկայացնող այն հատվածը, որի սահմաններում պարզորոշ նկատվում է նրա մեջ մտնող լեզվական տարրերի, միավորների նշանակությունը»²: Կոնտեքստը համարվում է **գրվածքի ավարտուն շարադրանքը**³: Մեր համոզմամբ՝ լայն առումով համատեքստը տվյալ լեզվով տվյալ մշակութային միջավայրում ժամանակի ընթացքում ստեղծված, կարևորված ու հիշված տեքստերի այնպիսի **ամբողջությունն** է, որի մեջ կա աշխարհընկալումային **ամբողջականություն**:

Գրողների փոքր մասն է միայն կարողանում հաղթահարել համատեքստը, այսինքն՝ ընդարձակել այն: Դա տրված է տաղանդավոր

¹ Տե՛ս **Սուրիասյան Ա.**, [Հայոց լեզվի հոմանիշների բառարան](#), Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1967թ., էջ 334:

² **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1987, էջ 307:

³ Տե՛ս **Աղայան Է.**, [Արդի հայերենի բացատրական բառարան](#), «Հայաստան» հրատ., Երևան, 1976 թ., էջ 756:

ու հանճարեղ գրողներին, ավելի պակաս շնորհալիները համատեքստի պահապաններն են, ապաշնորհները՝ թշնամիները:

Գրողների մեծ մասն այդպես էլ չի կարողանում հաղթահարել համատեքստը, այսինքն՝ ընդարձակել այն: Դա տրված է տաղանդավոր ու հանճարեղ գրողներին, ավելի պակաս օժտվածներն ու շնորհալիները սովորաբար համատեքստի պահապաններն են, ապաշնորհները՝ թշնամիները:

Իրականության և հիշողության, իրականության ու ժամանակի համապատասխանությունների և տարբերությունների չափաբաժիններով, համատեքստի ու ենթատեքստի փոխհարաբերության մակարդակով են պայմանավորված երկու տիպի՝ անհատական և կոլեկտիվ, տեքստերի առանձնահատկությունները:

Կոլեկտիվ տեքստերն առավել ընդունակ են ներդաշնակելու համատեքստն ու ենթատեքստը, ձգտելու տվյալ իրականության և տվյալ ժամանակի հարաբերության հաղթահարմանը՝ հանուն վերժամանակային իրողությունների և ցանկացած իրականության փոխհարաբերության ներդաշնակության: Այսինքն՝ կոլեկտիվ տեքստերը ձգտում են հաղթահարելու ժամանակը և դրանով իրենց տեքստային իրականությունը տարածելու ժամանակային բոլոր՝ անցյալ, ներկա, ապագա, իրականությունների վրա: Այսինքն՝ դրանք ձգտում են դիմադրողականություն ձեռք բերելու ժամանակի նկատմամբ՝ մշտապես հնարավորինս մղվելով դեպի համատեքստ:

Այս նպատակը փորձում են իրականացնել նաև անհատական տեքստերը: Ընդ որում՝ և՛ հավաքական, և՛ անհատական տեքստերն այդ բանն անում են հենց ժամանակի օգնությամբ: Տեքստը որքան երկար գոյատևի ժամանակի մեջ, այնքան ավելի ուժեղ կարող է դիմադրել ժամանակին, այսինքն՝ դառնալ վերժամանակային: Որքան երկար է ապրում տեքստը, այնքան շատ է բյուրեղանում խորհրդանիշներով և խորհրդանշայնացման փուլ թևակոխած բառերով՝ աստիճանաբար վերածվելով լեզենդի, առասպելի, էպոսի, միֆի, հեքիաթի, առակի, ասացվածք-առածի, և այդ կերպ հենց իրենք սկսելով թելադրել իրականություն:

Այսինքն՝ դառնալով համատեքստ՝ համատեքստային կոնկրետ տեքստերը (էպոս, լեզենդ, առասպել, միֆ, հեքիաթ, առակ, առած և այլն), ներազդելով ենթատեքստի վրա, իրենք են փորձում նախապատրաստել և ստեղծել նոր իրականություն: Այս կերպ է աշխատում «Ինչ ասված է, եղել է, տեղի է ունենում, լինելու է» մեր բանաձևումի՝ ապառնիին վերաբերող

հատվածը. ասվածը լինելու՛ է, այսինքն՝ ասվածն է ստեղծում, այսինքն՝ բան-ն է ստեղծում, այսինքն՝ «Եվ բանն ինքը Աստված էր». փաստորեն **ասված**-ն ու **աստված**-ը կարող են համարվել ոչ միայն հարանուններ, այլև **լեզվամտածողական հոմանիշներ**: **Աստված** բառին վերաբերող մեր այս հանգումին զուգահեռում են մի շարք լեզվաբանական մեկնություններ ու ստուգաբանություններ: Կազմությամբ բարդ այս բառի մեջ առանձնացնում են առաջին հերթին **տուած** բաղադրիչը: Բայց հետաքրքրական է, որ «այս ձևը նույնպես բաղադրելի է, քանի որ ծագումնաբանորեն առնչվում է ցեղակից լեզուների այնպիսի ձևերին, որոնք առհասարակ արտահայտում են «աստված» իմաստը՝ ի վերջո կապվելով **լույս տալ, փայլել, ճառագել** (նաև՝ **թվալ, երևալ**) իմաստներին: Ըստ այսմ, հայերեն **տուած**, այլև (**աս**) **տուած** անվանումները նախնական իմաստով նշանակում են «**լույս**», «**լույս տալը**»⁴:

Գևորգ Զահուկյանը հայերեն **աստուած** բառի ստուգաբանության մեջ հավանական է համարում **տու**-ի (**տի**) հնդեվրոպական **diu** «**երկնքի հայր, աստված**» արմատը:

Հետաքրքրական է նաև, որ հնդեվրոպական **tieu**-ն, հայերեն **տի-ել** (գրաբարում՝ **թի, թուիմ**), **թուի** (թվում է) ձևերի նախնական իմաստն է **ասել, պատմել**, որին վերևում մենք հանգեցինք մեր գաղափարների տրամաբանական շղթայում՝ որպես **լեզվամտածողական հոմանիշության** երևույթի դրսևորում:

Կարծում ենք՝ **աստված**-ը ասելու, խոսքի հետ է առնչում նաև Գ. Զահուկյանի տեսակետը, թե «Անհավանական չէ նաև (**հ**)**աստուած** «ի հաստատումն ածող, հաստող, հաստատող» մեկնաբանությունը»⁵:

Իհա՛րկե, ցայսօր տարբեր հեղինակների՝ տարբեր ժամանակներում **աստուած** բառի բանասիրական մեկնաբանություններից ու ստուգաբանական վերլուծություններից որևէ մեկը չի կարելի վերջնական և անառարկելի համարել, սակայն ասելու (տեքստի) երևույթի մեր մեկնաբանության և **աստուած** բառանվան լեզվաբանական

⁴ **Համբարձումյան Վ.**, «Աստված բառի ծագումն ու տիպաբանությունը», Երևան, 2002, Զանգակ-97, էջ 18:

⁵ **Զահուկյան Գ.**, «Հայկական շերտը ուրարտական դիցարանում», «Պատմաբանասիրական հանդես», 1986,1, էջ 52:

ստուգաբանությունների միջև իմաստային համապատասխանության տարբերակը տրամաբանական և բավականին շոշափելի է:

Այս տրամաբանությամբ, ուրեմն, ինչպես իրականությունն է ստեղծում խոսք (տեքստ), այնպես էլ խոսքը (տեքստը, ասված-աստվածը) ստեղծում է իրականություն (հիշենք, որ խոսքը՝ բանը, նաև Աստված է՝ ըստ նորկտակարանային տեքստի): Իհարկե, ասվածը ոչ թե պատահական, այլ նախ կոլեկտիվ ստեղծագործության արդյունք բանահյուսական, նաև ժամանակի ընթացքում որպես այդպիսիք ընկալվող և անվերապահորեն ընդունված անհատական տեքստերին է վերաբերում:

Ասելով ասվածը կյանքի կոչելու, իրականացնելու, ի կատար ածելու, անելու, կատարելու և հաստատելու երևույթը արձանագրում են նաև ժամանակը հաղթահարած առած-ասացվածքները, դարձվածքները. «Այնքան ասացիր, մինչև գլխիդ եկավ», «Մի բան ասա՛ անենք», «Մի՛ ասա, որ գլխիդ չգա», «Ասա, որ լինի» և այլն:

Որքան էլ Վիլյամ Սարոյանի համար գրելու լեզու է ծառայում անգլերենը, դիպուկ է նրա իսկ խոսքն այն մասին, թե իր գրի ոգին հայկականն է, քանի որ նրա տեքստի լեզվամտածողական համակարգը գենետիկորեն, անխուսափելիորեն հայկական ոգու բանաձևումն է՝ ուր էլ լինես, ասա Հայաստան, և կրում է հայերեն համատեքստի լեզվամտածողական կնիքը: Հայրենիքի աշխարհագրական-պատմական գոյությունը («ուր էլ որ լինես») Վ. Սարոյանն արդարացնում է մի դեպքում միայն՝ եթե կա այդ հայրենիքի մշակութային գոյություն և մշակութաբանական ընկալում («**ասա՛** Հայաստան»): Առանց ասելու, այսինքն՝ առանց ասքի, խոսքի, բանի հայրենիք չի կարող գոյություն ունենալ: Որպեսզի Հայաստանը լինի, նախ Հայաստան ասել կարողանալ է անհրաժեշտ:

Ասելը ապրեցնելն է, չասելը՝ մոռանալ տալը-սպանելը:

Չարի մեջ դժվար թե այս գիտակցությունը լինի, նրա մեջ կա մահվան հակումը՝ չասելը, հաճախ պարզապես ասելը արգելելը, լռության մատնելը, չասելով մոռացնել-սպանելը: Չարի, չարիքի մեջ եղած մահվան հակումով է հայերիս ցեղասպանությունը զուգակցվել բառերի (**հայրենիք, Հայաստան, ազգություն** և այլն) արգելումով. չասել, այսինքն՝ մոռանալ տալ, սպանել: Իհարկե, մենք հեռու ենք այն մտքից, որ ցեղասպանություն ծրագրողներն ու իրականացնողները գիտեին լեզվամտածողական-արժեհամակարգային այս իրողությունները:

բնականաբար գործում էին կենդանական բնագրները, որոնք չէին կարող համադրվել քաղաքակրթական արժեհամակարգերի հետ:

Տեքստից իրականություն, իրականությունից տեքստ ու դարձյալ տեքստից իրականություն պարբերական շղթան խարսխվում է ճշմարտացիության վրա: Ըստ քաղաքակրթական ամենանշանավոր տեքստերից մեկի՝ «Աստվածաշնչի», մենք այժմ գտնվում ենք այդ պարբերաշղթայի հերթական՝ տեքստից դեպի աշխարհային իրականություն շարժման հատվածում: Այս ընթացքն իր խորհրդանշական դրսևորումն ունի, օրինակ, կոլեկտիվ ստեղծագործության արդյունք հանդիսացող հեքիաթի սկզբում. տեքստի՝ իրականություն ստեղծելու ներուժն այս ժանրում լինել-չլինելու նժարն ամեն անգամ թեքում է լինելու կողմը. «լինում է, չի լինում...», «կար, չկար...» բանաձևում-խնդիրները միշտ լուծվում են հօգուտ լինելու՝ «Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում», «Կար-չկար, մի մարդ կար»:

Տեքստից (բանից) դեպի աշխարհային իրականություն ընթացքը կշարունակվի այնքան, մինչև բանից՝ խոսքից (տեքստից), ստեղծված աշխարհն ինքը (վերստին, դարձյալ) դառնա բան (տեքստ):

Աշխարհը մի քանի հազարամյակ արդեն իսկ զբաղված է խոսք ստեղծելով, տեքստ ստեղծելով, բան ստեղծելով, այսինքն՝ **բան-աստեղծությամբ**:

Բանաստեղծումի կանգառը մահվան նշանն է: Երբ բանաստեղծությունը մղվում է երկրորդ պլան, հանրության մեջ ի հայտ են գալիս բարոյական, արժեհամակարգային փլուզումներ:

Կոլեկտիվ ստեղծագործության արդյունք հանդիսացող բանահյուսական (կամ սրան մոտեցող) և անհատական տեքստերի միջև կա մի էական տարբերություն. անհատական տեքստում (խոսքում) ճնշող դիրքում են փաստերը, իսկ կոլեկտիվ ստեղծագործության արդյունք հանդիսացող տեքստը ձգտում է կարևորելու փաստերի միջև ընկած տարածությունը: Այդ իսկ պատճառով անհատական տեքստերը կարող են հարուստ լինել փաստերով, բայց անհատական-կամայական պատկերացումներով «տրամաբանելու» պատճառով այդ փաստերը կարող են հեռու լինել ճշմարտությունից ու ճշմարտացիությունից, մինչդեռ կոլեկտիվ ստեղծագործության արդյունք հանդիսացող տեքստերը առավել մեծ թվով անհատների, սերունդների վերահսկողության շնորհիվ կարող են առավել ճշմարտացի լինել, թեև նույն պատճառով այնքան էլ հազեցած չլինել փաստերով՝ այսպիսով ակնարկելով, որ ճշմարտացիությունը ոչ թե փաստերի պարզ հերթագայական շղթան է,

այլ այդ փաստերի միջև ընկած տարածությունը: Փաստերը ճշմարտացիությամբ կապելն ավելի մատչելի է, ավելի տրված է կոլեկտիվ ստեղծագործության արդյունք հանդիսացող բանահյուսական տեքստին, քան անհատականին, քանի որ վերջինիս մեջ փաստերի միջև ընկած տարածության մեկնաբանությունը սուբյեկտիվ է: Այս պատճառով, մեր համոզմամբ, ճշմարտացիությանն ավելի մոտ գտնվելու համար վստահության նախապատվությունը պետք է տալ ոչ թե պատմիչին, այլ ասացողին, ավելի շատ բանահյուսական կամ որպես այդպիսին ընկալվող, քան պատմագրական տեքստին:

Մովսես Խորենացին դժգոհում է, որ անբավարար են պատմագրական աղբյուրները, և առողջ բնագրով մղվում է դեպի ժողովրդական բանաստեղծությունը՝ կոլեկտիվ-բանահյուսական տեքստերը, դրանց մեջ փնտրում է և՛ պատմական փաստերը, և՛ այդ փաստերը շաղկապող տեքստային պատմության պատմական օբյեկտիվ շարժընթացը, ասել է՝ ճշմարտացիությունը: Հայոց պատմության իրադարձային նշանավոր պահի մասին պատմագրական տեքստը (պատմիչ՝ «Վարդանի և հայոց պատերազմի մասին») անարգանքի այունին է գամում Վասակ Սյունեցուն, սակայն նույն պատմական անհատի վերաբերյալ արգահատական ուղղվածությամբ արժեքավոր կոլեկտիվ-բանահյուսական տեքստերի (ասացող) բացակայությունը հուշում է, որ պատմիչի տեքստը թեև կարող է հագեցած լինել պատմական փաստերով (ինչպես որ ցույց տվեցինք Եղիշեի տեքստը վերլուծելիս), սակայն հեռու լինել ճշմարտացիությունից (ինչպես որ նույն տեքստը գնահատեցինք տրամաբանականության մեթոդով):

Ինչպես որ տրամաբանական լինելու հանգամանքն է տեքստի կարևոր չափորոշիչներից մեկը, այնպես էլ ճշմարտացիությունն է հիշողության գրավականը, և առանց հիշողության չկա քաղաքակրթություն: Ճշմարտությունը տրամաբանական է, իսկ հիշվելու ամենամեծ ներուժն ունի տրամաբանականը:

Դժվար է հիշել այն, ինչը տրամաբանական չէ:

Քաղաքակրթության հիշողությունը նախևառաջ միջերը, էպոսները, առասպելները, ասացվածքներն ու խորհրդանիշներն են (թեկուզ և այն պատճառով, որ դրանք ավելի հին են) և հետո միայն պատմագրական երկերը, դրանցում եղած իրադարձությունների տեքստային արձանագրումները և այլն:

Հիշողության կերպը կարող է լինել բանավոր կամ գրավոր: Ժողովրդի լեզվամտածողության արգասիք համատեքստն անցել է

մշակման բանավոր և գրավոր շրջան: Նախքան գիրը համատեքստը մշակվել է բանավոր կերպով, գրի ստեղծումից հետո համատեքստի բանավոր մշակումը զուգահեռվում է գրավոր մշակմամբ, իսկ վերջին ժամանակներս համատեքստի գրավոր մշակումը սկսել է ավելի ընդարձակվել: Գրողներն իրենք են դառնում ասացողներ: Պատահական չէ, որ նրանցից մի քանիսի ստեղծագործությունները ժանրային առումով սկսեցին ասքեր, վիպասքեր, լեգենդներ հիշեցնել և կոչվել (Խաչիկ Դաշտենց՝ «Ռանչպարների կանչը», Վիգեն Խեչումյան՝ «Գիրք լինելության», Մուշեղ Գալշոյան՝ «Մարութա սարի ամպերը» ժողովածուի մի շարք գործեր և այլն): Ավելորդ չէ շեշտել, որ էպոսի, հեքիաթների գրական մշակումները հենց այդ իրողության ապացույցն են: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ նշված ստեղծագործությունները բանաստեղծական էություն ունեն. դրանք թեև շարադրված են արձակ, սակայն բառի, հաճախ նաև ողջ տեքստի խորհրդանշայնացմամբ, բանաստեղծությանը բնորոշ տեքստային կառույց ստեղծելու ձևերով ու յուրահատկությամբ, բառի վրա դրված իմաստային խտությամբ ու ծավալով, տեքստային հոգեբանության հուզականության մեծ բյուրեղացումներով «գենետիկ» կապ ունեն բանաստեղծական տեքստի հետ:

Կարելի է ասել, որ հայ ժողովրդի լեզվամտածողության արգասիք համատեքստն այժմ թևակոխում է մշակման նաև իր գրավոր-գրական շրջանը: Մասնավորապես հայ ժողովրդի բանաստեղծության գագաթը՝ «Սասնա ծռեր» էպոսը, թևակոխել է իր մշակման գրավոր շրջանը: Հիշենք Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի մշակումները: Երկու դեպքում էլ (թե՛ գրավորի, թե՛ բանավորի) որակն առնչվում է հիշողությանը:

Գրականությունը հիշողության գրավոր կերպն է, բանահյուսություն-բանաստեղծությունը՝ բանավոր:

Հիշողության նախապայմանը տեքստը դարձնում է քաղաքակրթական նշանակության խոսք: Ամեն ասված խոսքով չէ, որ մարդկությունը, հասարակությունը, ազգը, ժողովուրդը ծանրաբեռնում է իր հիշողությունը՝ չնայած վերջինիս անսահման ծավալին ու տարողությանը:

Գրավոր խոսքի գիտագեղարվեստական արժեքը պայմանավորված է քաղաքակրթական հիշողության հետ հաշտ լինելու հանգամանքով: Գիտական հայտնագործությունները, գեղարվեստական ստեղծագործությունները, զանազան թելերով ու ամրաններով ի վերջո

կապակցվելով քաղաքակրթական հիշողությանը, մշակում, հղկում են քաղաքակրթության համահավաք տեքստը, որ մարդկայինի, հումանիզմի արժեհամակարգի խարխիսն է:

Հիշողության շնորհիվ տեքստը պահպանում և գործադրում է իր գլխավոր առանձնահատկություններից ևս մեկը՝ ինքնավերարտադրման կարողությունը:

Տեքստը մշտապես ինքնավերարտադրվում է:

Բարձր է այն տեքստը, որը շաղկապված է հիշողությանը, ցածր է այն տեքստը, որը հիշողությանը չի առնչվում:

Պարզ է, որ հիշողություն ասելով մենք հասկանում ենք միմիայն հավաքական հիշողությունը, և եթե տվյալ տեքստը առնչվում է սոսկ մեկերկու անհատների կամ նույնիսկ անհատների մի փոքրիկ խմբի հիշողությանը, այդ հանգամանքը դեռևս չի նշանակում, որ գործ ունենք բարձր տեքստի հետ: Բարձր տեքստերը առնչվում են հանրության, ժողովրդի կամ ժողովուրդների, մեկ մշակույթի կամ մշակույթների հիշողությանը: Իսկ մշակութային նման հիշողությամբ պահպանվող տեքստերը, բացի ժամանակային ընկալումից, պարտադրորեն ունենում են նաև վերժամանակային իմաստային ընկալում, քանի որ իրենց պարունակության կարևորությամբ ու առաձգականությամբ կարողանում են հաղթահարել ժամանակային սահմանափակ տարածքները և մի սերնդից ներկայանալ մյուսին:

Տեքստը հիշվում է ամենևին էլ ոչ այն պատճառով, որ այն ինչ-որ կոնկրետ ժամանակաշրջանի կոնկրետ իրադարձության անդրադարձն է, այլ հատկապես այն բանի շնորհիվ, որ մեկ այլ կոնկրետ ժամանակաշրջանում մեկ այլ կոնկրետ իրադարձություն կարող է առիթ դառնալ կոնկրետ այդ տեքստը հիշելու, վերհիշելու համար:

ТАДЕВОС ТОНАЯН - КОНТЕКСТ И ТЕКСТ

Каждый текст содержит некоторые требования к содержанию, и чтобы удовлетворить их, он создаётся на относительно законченных и сформированных границах. Поскольку никакой отдельный текст не полностью определяет требования к содержанию, он порождает другой текст. Контекст - это целостность текстов, которые были созданы на определённом языке и в определённой культурной среде, были приоритетными, сохранены и содержат общее восприятие мира.

TADEVOS TONAYAN - CONTEXT AND TEXT

Each text contains some content requirements, and to satisfy them it is formed within relatively completed and shaped boundaries. Since no separate text fully meets content requirements, it gives birth to another text. Context is such an entity of texts that have been created in a certain language and a certain cultural environment, have been prioritized, saved and contain a common world perception.